

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

30.01.2019

Նախքան օրակարգի հարցերին անցնելը ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը շնորհավորեց պրոֆեսոր Գ.Հակոբյանին 75 ամյա հոբելյանի կապակցությամբ: Գիտական խորհրդի անդամները շնորհավորեցին Մ.Հայրապետյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու կապակցությամբ, Թ.Սոֆյանին և Կ.Կիրակոսյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու կապակցությամբ:

Օրակարգ`

1.Լեզուների ամբիոնի ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրություն:

(Ձեկուցող` հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր

Ա.Գ.Հարությունյան)

2.Գիտական խորհրդի 2018թ. հունվարի որոշման կատարումը Սպորտային մանկ. և հոգեբան. ամբիոնի կողմից:

(Ձեկուցող` հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր

Ա.Գ.Հարությունյան)

3. Իրավական ակտերի հաստատման մասին:

4. „Մարզաշխարհ” թերթում հայտարարված ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների մրցույթին մասնակցելու մասին:

1.Բաբայան Հ. – սպ. մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մզթ

պրոֆեսոր:

2. Հարությունյան Ա.Գ. – սպորտի մենեջմենթի և հասարակական գիտությունների ամբիոնի վաչիչ, պրոֆեսոր:

3. Գրիգորյան Յու. Գ. – ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ:

1.ԼՍԵՑԻՆ՝ Հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ա.Հարությունյանին: Նա ներկայացրեց լեզուների ամբիոնի ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրությունը:

(Տեղեկանքը կցվում է)

Ելույթ ունեցան՝ պրոֆեսոր Ս.Հովեյանը, դոցենտ Է.Գալտագայանը, դոցենտ Ա.Գյոզալյանը, պրոֆեսոր Ա.Գրիգորյանը, ռեկտոր,պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը: Նրանք նշեցին ամբիոնի պատշաճ աշխատանքը, բարյացակամությունը ուսանողների նկատմամբ, ամբիոնների հետ համատեղ սերտ կապերը և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝1. Հավանություն տալ լեզուների ամբիոնի կատարած ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքներին:

2. Հաստատել գիտական խորհրդի որոշումը:

2.ԼՍԵՑԻՆ՝ Հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ա.Հարությունյանին: Նա ներկայացրեց սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից կատարած աշխատանքները գիտական խորհրդի 2018թ. հունվարի որոշման կետերի շուրջ:

(Տեղեկանքը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

3.ԼՍԵՑԻՆ՝ Իրավախորհրդատու Գ.Սարգսյանին: Նա ներկայացրեց պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման կանոնակարգը, մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության կանոնակարգի նախագիծը:

(Կանոնակարգերը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝1. Հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը:

2. Հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը:

3. Հաստատել ինստիտուտի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեթոդներ և գործիքներ ուղեցույցը:

4. Հաստատել մասնագիտական կրթական ծրագրերի համեմատական վերլուծության (բենչմարկինգի) քաղաքականությունը և ընթացակարգը:

5. ՀՖԿՍՊԻ հիմնադրամի վարչական համակազմի աշխատանքի ընդունման և պայմանագրերի լուծման ընթացակարգը:

4.ԼՄԵՑԻՆ՝ գիտական քարտուղար, դոցենտ Մ.Ռ.Ասատրյանին: Նա ներկայացրեց մրցույթին մասնակցող թեկնածուներին:

ՖԴԱՏ և ՍՄԿ ֆակուլտետների դեկաններ՝ Գ.Սարգսյանը և Է.Գալտազազյանը ներկայացրեցին մրցույթին մասնակցող ամբիոնների վարիչներ՝ պրոֆեսոր Ա. Հարությունյանին, պրոֆեսոր Հ. Բաբայանին, դոցենտ Յու. Գրիգորյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ բոլոր թեկնածուներին թողնել փակ քվեարկության ցուցակում:

Մրցույթին մասնակցող ամբիոնների վարիչները ներկայացրեցին իրենց աշխատանքային հետագա ծրագրերը:

Հաշվիչ հանձնաժողով՝

Մելքոնյան Հ.

Սելումյան Ն.

Հովեյան Ս.

Գիտական խորհրդի 34 անդամներից նիստին ներկա էին 31-ը:

Քվեարկության արդյունքները

	կողմ	դեմ
Բաբայան Հ.Ա. սպ. մանկավարժության և հոգե. ամբիոնի վարիչ	31	-
Հարությունյան Ա.Գ. սպ. մենեջմենթի և հասարակական գիտ. ամբիոնի վարիչ	31	-
Գրիգորյան Յու.Գ. ՖԴԱՏ և մեթոդիկայի ամբիոնի վարիչ	31	-

Որոշեցին՝ Հաստատել քվեարկության արդյունքները:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Վ. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ՝

Մ. Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ

